



ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔ

Սաղմոսավանքը Հայկական առաքելական վանական համալիր մըն է: Ան կը գտնուի Հայաստանի Արագածոտնի մարզի Սաղմոսաւան գիւղին մէջ, Քասախ գետի ափին, Երեւանէն 37 քմ. հեռաւորութեան վրայ:

Սաղմոսավանքի վանական համալիրը միջնադարեան ամենահարուստ եւ նշանաւոր հոգեւոր կեդրոններէն մէկն է:

Կառուցուած է 13-րդ դարուն:

Սաղմոսավանք բառին հիմքը սաղմոսն է: Սաղմոսը հոգեւոր երգն է:

Սաղմոսավանքը աշխարհի միակ վանքն է, ուր հնչած սաղմոսներուն համար Սաղմոսավանք կոչուած է:

Աւանդութեան համաձայն հայոց առաջին կաթողիկոսը՝ Գրիգոր Լուսաւորիչ, 4-րդ դարուն Արագածի գագաթէն նկատելով այս վայրը՝ եկեղեցի կառուցած է այդտեղ: Այնուհետեւ հաւաքելով նոյն տեղի հոգեւորականները, անոնց սաղմոսներ սորվեցուցած է:


ՀԱՂԲԱՏԻ ՎԱՆՔ

Հաղբատի վանքը միջնադարեան Հայաստանի հոգեւոր, մշակութային, գիտական եւ ուսումնական կեդրոններէն մէկն է: Ան կը գտնուի Հաղբատ գիւղի հարաւ-արեւելեան մասին մէջ:

Վանքին առաջին Սուրբ Նշան եկեղեցին, որ նուիրուած է Քրիստոսի փրկարար խաչին, 976 թուականին կառուցած է Աշոտ թագաւորին կինը՝ Խոսրովանոյշ թագուհին:

Չանգակատունը:

Վանքի տարածքին արեւելեան բարձրադիր մասին մէջ, գլխաւոր մուտքին դիմաց, առանձին կանգնած է հայ ճարտարապետութեան անգուգական յուշարձան՝ Հաղբատ վանքին զանգակատունը, որ 1245-ին կառուցուած է Համազասպ վանաւոր կողմէ:











ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՈՏԵԱՆ-ՇԱՀԻՆԵԱՆ
ՆԿԱՐԱՍՈՐԵՑ՝ ՈՒՅՅԻ ԲԵՇՈՇԵԱՆ


Խմբաւորէ՛ միավանկ եւ բազմավանկ բառերը:
 Աղջիկ, խակ, ջուր, շինութիւն, կաւ, պուպրիկ, ինքնաշարժ, գետ, ձիւն,
 տետրակ, ամպ, պատուհան

ՄԻԱՎԱՆԿ ԲԱՅՔԵՐ	ԲԱԶՄԱՎԱՆԿ ԲԱՅՔԵՐ


Կրնա՞ս լուծել: Մե՞ծ, թե՛ փոքր:

			<input type="checkbox"/>	
	<input type="checkbox"/>		<input type="checkbox"/>	
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Գտի՛ր ճիշդ ճամբան:



Գունաւորէ՛ հետեւեալ պատկերը նախասիրած գոյներով:



Beckadoodles.com

ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐ (Յունգարական Յեքիաթ)

Ապրիլի առաջուտ մըն էր, Երկու եղբայրներ դեռ կը քնանային իրենց տաքուկ անկողիներուն մէջ, երբ հայրը ուրախութեամբ ներս մտաւ.

- Ծոյլ հաւիկներ, շուտ արթնցէ՛ք, ելէ՛ք անկողիներէն: Անոնք հիւրեր ունէին պատուհանին առջեւ:

Գիշերուընէ եկեր էին ու հիմա իրենց կը բարեւեն: - Ահա՛ մտիկ ըրէ՛ք,- ըսաւ հայրը եւ անմիջապէս պատուհանը բացաւ:

Բաց պատուհանէն ներս թռչուններուն ծլւիկները կը լսուէին.

-Ծի՛կ-ծի՛կ, ծի՛կ-ծի՛կ, ծլւիկ
Օրերով ճամբորդեցինք
Ահա՛ հասանք նոր երդիք
Բայց անօթի մնացինք
Գտանք համով միջատներ
Կշտացուցինք փորիկը մեր
Ծի՛կ-ծի՛կ, ծի՛կ-ծի՛կ, ծլւիկ
Ծի՛կ-ծի՛կ, ծի՛կ-ծի՛կ, ծլւիկ:

Երկու եղբայրները անմիջապէս ցատկեցին իրենց անկողիներէն եւ մօտեցան պատուհաններուն: Անոնք տեսան ծիծեռնակները, որոնք եկեր էին իրենց բոյնը շինելու՝ տանիքի երդիքին տակ: Երկար ճամբորդութենէ մը ետք՝ ցուրտէն փախած, եկած էին Ապրիլ ամսուան տաք օրերը վայելելու:

Անոնք իրենց կտուցներով ցեխ եւ շիւղ կը հաւաքէին ու անոնցմով իրենց նոր բոյնը կը շինէին: Բոլորն ալ վարպետ որմնադիրներ ու նման


կ'աշխատէին: Անոնք շարժումներով կարծես կը խօսէին իրարու հետ.

- Դեռ ցեխի պէտք ունինք:
- Շա՛տ լաւ, ես կը բերեմ:
- Քիչ մը եւս մօտեցի՛ր:
- Յարկաւ, ա՛ն:
- Քիչ մը եւս շիւղ պէտք է:
- Յոս կայ, ա՛ն:
- Յոգնեցանք, ի՞նչ պիտի ուտենք:
- Ի՞նչ կ'ուզես:
- Որդ եւ թրթուր լաւ կ'ըլլայ:
- Ահաւասի՛կ, ես գտայ:
- Օ՛ն, ճաշը պատրաստ է:
- Յրամեցէ՛ք ընկերներ:

Բոլոր թռչունները սեղանին շուրջ հաւաքուեցան: Անոնք գիրուկ որդերով եւ թրթուրներով իրենց փորիկները կշտացուցին:

Անոնք մէկ շաբթուան ընթացքին թէ՛ իրենց բոյնը շինեցին եւ թէ՛ բոյսերուն վնաս պատճառով միջատները կերան ու պարտեզին հողը մաքրեցին:

Ծիծեռնակները իրենց այցելութեամբ բարիք ըրին եղբայրներուն, որոնք այս տարի զանազան տեսակի բանջարեղէններ պիտի կարենան տնկել: Անոնք պարտեզը պիտի լեցուի աւելի առատ լուիկներով, համեղ պղպեղներով ու կանաչ լուբիաներով:



ՄԱԾՈՒՆ

Կաթնամթերք մը, որուն պատմութիւնը հազարամեակներ կ'երկարի: Անկա օժտուած է բարձր բնաքիմիական աշխուժութեամբ եւ կը պարունակէ կենդանի կաթնաթթուային մանրէներ: Ան հարուստ է նաեւ կենսանիւթերով եւ օգտակար բազմաթիւ տարրերով:

Մածունին հայրենիքը կը համարուի Հայկական լեռնաշխարհը:

Հայաստանի մէջ կաթնամթերքներուն, մասնաւորապէս՝ մածունին լայն գործածութեան մասին բազմաթիւ գիտնականներ կը վկայեն:

Նախնադարուն մարդիկ կաթին աւելցուկը երկար ժամանակ ձգած են, եւ ան վերափոխուած է «թթու կաթի»՝ մածունի: Պատահական այդ յայտնագործութիւնն ալ աստիճանաբար լայն կիրառութիւն ունեցած է:

Այսօր ալ մածունին ստացման եղանակը նոյնն է, ինչպէս որ էր հազարամեակներ առաջ: Եռացած կաթին մէջ փոքր քանակութեամբ թթուած մածուն խառնելով կը մակարդեն



կաթը: Մածունը հրաշալի դեղամիջոց է աղիքային-ստամոքսային հիւանդութիւններու, թունաւորումներու, այրուածքներու եւ վերքերու դէմ:

Մեր նախնիները ծանօթացած են նաեւ մածունէն կարագ ստանալու կերպին:

Հայաստանի մէջ յայտնաբերուած են նաեւ մածունի երկարատեւ պահպանման միջոցները: Ամրան մածունը տոպրակով կը քամէին, կճուճներու մէջ կը լեցնէին եւ օդէն զերծ պահելու նպատակով վրան իւղ կ'աւելցնէին:

Աւանդական հայկական մածունը կը բարելաւէ մարսողութիւնը եւ կը բարձրացնէ ախտամերժումը:

Մածունը կը հանդիսանայ հայ ը ն տ ա ն ի ք ի ս ն ն դ ա կ ա ր գ ի ն անբաժանելի մէկ մասը: